«ГОРЦК» ООО
«GORTSQ» Limited Liability Company

«25» հոկտեմբերի 2021թ.

N 8/21/1

Գորիս համայնքի ղեկավար
պարոն Ա. Առուշանյանին
«Գործք» ՍՊԸ-ի
գլխավոր տնօրեն Արմեն Սարգսյանից

Հարգելի պարոն Առուշանյան

«Գործք» ընկերությունը հիմնադրվել է 2005թ.-ին: Նրա առաքելությունն է օգնել գործատուներին՝ ՀՀ աշխատանքային և հարկային օրենսդրության ճիշտ մեկնաբանման և կիրառման, փաստաթղթաշրջանառության կազմակերպման, աշխատակազմերի մարդկային ռեսուրսների կատարելագործման, նոր առաջավոր մեթոդների ներդրման, իսկ պետությանը նաև նշված օրենսդրությունները կատարելագործելու հարցերում: Գործքի հիմնադիրները ՀՀ աշխատանքային հարկային և պետական գնումների օրենսդրությունների մշակման ակունքներում կանգնած մասնագետներ են, անվանի գիտնականներ, տեսաբաններ և արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը և այլն:

«Գործք» ընկերության մանդատը ճանաչում է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, ՀՀ կառավարությունը: Ունենք համագործակցության հուշագիր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարությունների հետ:

«Գործք» ընկերությունը հիմնադրել և շուրջ 11 տարի լույս է ընծայում քաղաքական գործընթացներից անկախ իրավական, տեղեկատվական, փորձագիտավերլուծական ամսագիրը, որը բավականին աղյունավետ աջակցություն է ցուցաբերում ամսագրին բաժանորդագրված ավելի քան 950 ընկերություններին, դեսպանատներին, կրթական և մշակութային, ուսումնական հաստատություններին, դատավորներին, ուսանողներին և բազմահազար ընթերցողներին՝ աշխատանքային, հարկային և գնումների օրենսդրությունները իրավաչափ կիրառելու հարցերում: Գորիս համայնքի մի շարք կազմակերպություններ (հանրային և մասնավոր) նույնպես բաժանորդ են մեր ամսագրին:

ք. Երևան, Սարմեն 1 , հեռ. (010)56-72-93, 094444005, www.gortsq.am

Կազմակերպությունների կողմից մեր աշխատանքի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը ընդլայնել է «Գործք» ընկերության գործունեության աշխարհագրությունը: Հանրապետության ամենախոշոր համայնքներում գործող մասնաճյուղերի կողքին ցանկություն ունենք զարգացնել նաև Հանրապետության հարավային մարզում գործող փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների ներուժն ու կարողությունները՝ կապված աշխատանքային, հարկային և գնումների օրենսդրության կիրառման հետ, մանավանդ, որ Գորիսի համայնքը ի սկզբանե գտնվում է «Գործքի» առաջնահերթությունների մեջ: Մեր ծառայությունները հասանելի կլինեն համայնքապատկան կազմակերպություններին (համայնքապետարան, դպրոցներ, մանկապարտեզներ և այլն), իրավաբանական և ֆիզիկական անձ համարվող գործատուներին՝ հաշվապահական հաշվառման, կադրային քաղաքականության իրականացման և պետական գնումների օրենսդրության ճիշտ կիրառման և օրինական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու և արմատավորելու հարցերում:

Հաշվի առնելով Ձեր նախանձախնդիր վերաբերմունքն օրինական աշխատանք կազմակերպելու հարցում, խնդրում եմ Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3 հասցեի վարչական շենքից, վարձակալական հիմունքներով, «Գործք» ընկերությունը տրամադրել 2 գրասենյակային տարածք՝ խորհրդատվական ծառայություններ մատուցելու և Գործք ամսագրի խմբագրության աշխատանքները կազմակերպելու համար, ինչը կօգնի լուսաբանել և ներկայացնել Գորիս համայնքի օրինակելի կազմակերպությունների աշխատանքը, խրախուսել փոքր և միջին կազմակերպություններին և այլն:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված աշխատանքների կազմակերպման համար կստեղծվեն 5-10 աշխատատեղեր, որոնք կզբաղեցնեն Գորիս համայնքի համապատասխան մասնագետները: Տեղեկացնում եմ նաև, որ պատրաստ ենք կատարել որոշակի ներդրումներ՝ գրասենյակների վերանորոգման նպատակով:

Շնորհակալություն՝ հանուն օրինական աշխատանքի համագործակցության համար:

«Գործք » ՍՊԸ-ի

գլխավոր տնօրեն՝ Ա. Մարգսյան

«ГОРЦ» ՍՊԸ
"GORTSQ" LLC
01552760

ք. Երևան, Սարմեն 1 , հեռ. (010)56-72-93, 094444005, www.gortsq.am

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՌՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏԻՑ 4840
27 10. 2021 թ.